

Մականունը իր հստակ բառակազմությամբ վաղուց հայտնի ըմբռնում է հայերենում ե ունի հետևյալ իմաստային տարբերակները՝ ավել անուն (ավելանուն), ածական անուն, վերադիր անուն, մակդիր, կեղծանուն, փութ /փոք/ փուտ անուն, իսկ արևմտահայերենում՝ նաև ազգանուն, որոնք արդյունքում հանգում են «անվան վրա դրվող» ընդհանուր իմաստին: Հր. Աճառյանը դրանք կոչում է ածական անուն և գրում. «Երբ համայնքը մեծանում է... սակավաթիվ անունները այլևս բավական չեն, ուստի անուններին պիտի ավելացնեն զանազանիչ մի երկրորդ միջոց: Ջարգացման այս առաջին աստիճանը կազմում է ածականը»:¹

Վերջին տասնամյակներում մականունը հայտնվել է նաև անվանագիտական տերմինաբանության ոլորտում և անձնանվանագիտության (մարդանվանագիտության)² կարևոր հասկացություններից է, քանի որ, ինչպես հանդգնեցինք, Հր. Աճառյանը մականվան, ըստ նրա՝ ածականի հանդես գալը անձի անվանման բանաձևում համարում է «զարգացման առաջին աստիճանը»:

Եթե արևմտահայերենում մականունը այսօր ևս հստակ սահմաններ ունի և նույնանում է ազգանվան հետ, ապա արևելահայերենում նշանակում է այն ամենը, ինչ դրվում է անվան վրա, բացի ազգանունից:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մականունը կամ ածական անունը, ավելանունը, ի սկզբանե անհատի անվանը ուղեկցող միավոր էր: Մեր էպոսը ասվածի լավագույն ասպայացնելն է տալիս՝ Առյուծածև Մհեր, Չենով Օհան, Յ... Վերգո: Հիշենք նաև հնդկացիական ցեղերի զանազան բնիկների անվանագիտական համակարգերը՝ «Օձ աչք», «Արագընթաց նետ» և այլն:

Մականվան պատճառաբանվածությունը երբեմն շատ տարօրինակ, անսպասելի դրսևորումներ է ունենում, և հաճախ կապը մականվան բնիմաստի և մականունը կրողի միջև բավականին դժվար է լինում գտնել: Վերջերս առնչվեցինք հետևյալ դեպքին վիրահայերի կյանքից: Միրզոյան ազգանունով մի աշակերտ ստացել է «քիսաչի» մականունը միայն այն պատճառով, որ Թիֆլիսում կա հայտնի «Միրզոյի բաղնիքը», և ահա դրա հետ ոչ մի կապ չունեցող տղայի ազգանունը կապվել է այդ բաղնիքի հետ, և նա որպես մականուն ստացել է բաղնիքին խիստ բնորոշ աշխատողի անունը: Պակաս ուշագրավ չէ Գյումրի քաղաքի բնակչուհի տիկին Սուսանի մականունը՝ «մեռել լողցնող»: Այս մականունը նա ստացել է այն պատճառով, որ մանուկ հասակում վախեցել է մահացած տատին տեսնելուց: Բոլոր ժողովուրդների անվանագիտական համակարգում հեռանալով իրենց բնիմաստից, մականունները, բարձրացել են անձի անվան աստիճանի: Օրինակ, հայերենում դրանք ներկայանում են հստակ իմաստային խմբերով՝ ա) Բնություն, բնական երևույթներ՝ Յոլակ, Վարագդատ, Ծաղիկ, Հողիկ, Հողեր, Յոդիկ, Ծովիկ, Ծովինար, Փայլակ, Լուսին, Արև, Արեգ, Գարուն, Վարդենա: բ) Անհատի ներքին և արտաքին հատկանիշներ՝ Խաժակն, Վարդգես, Հրայր, Հրաչյա, Նազան, Կլորիկ, Փախչան, Քաղցրիկ, Թանգ(իկ), Պարթև, Սիրուն, Պերճ, Խելոք, Խոստիկ, Խումար, Չանազան, Չարդար: գ) Արտաքին աշխարհի առարկաներ՝ Վեմ, Վահան, Գոհար, Մանյակ, Շաքար, Կորկոտ, Մանուշակ, Մեղրիկ, Զնար, Չմրուխտ, Սաթուն, Ոսկի, Պարույր:

Անկասկած, մականունների շարքը պետք է դասվեն նաև «արիեստ, զբաղմունք, մասնագիտություն» իմաստային դաշտի միավորները, որոնք հետագայում, հատկապես արևմտահայերի մոտ դարձել են ազգանվանակերտ հիմքեր և այսօր էլ սփյուռքահայության շրջանում ազգանունների հիմնական զանգվածն են կազմում՝ Դուլաբյան (կահույքագործ), Փննաջյան (կոշիկ վերանորոգող), Բուլգուրջյան (բլդոր պատրաստող և վաճառող), Շաքրաբջյան (գինեգործ), Փլավյան (փլավ պատրաստող), Նենեջյան (դադձից օշարակ պատրաստող և վաճառող), Բալոյյան (ձկնորս):

¹ Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ե, Եր., 1962, էջ 355:

² Հմմտ., Տ. Ավետիսյան, *Հայկական ազգանուն*, Եր., 1987:

Նույն հիմնավորմամբ՝ տեղանվանական հիմքերով կազմությունները ևս պետք է դասել մականունների շարքը՝ բասենցի (Բասենցյան), ալածորցի (Ալածորյան), բոխարցի (Թոխարցյան), բլրցի (Բլրցյան), գեթունցի (Զեթունցյան), իզմիրցի (Իզմիրցյան)։ Այս կարգի ազգանվանական հիմքերը քննված են պրոֆ. Տ. Ավետիսյանի «Հայկական ազգանուն» արդեն նշված աշխատության մեջ։ Մեզ հասած հրապարակումների և անձնական շփումների շնորհիվ հայտնի է դարձել, որ Հ. Հարությունյանը ավարտել է տեղանվանական, իսկ Հ. Բարխուդարյանը՝ «արիեստ, գրադմունք, մասնագիտություն» մականվանական հիմքերով ազգանունների ուսումնասիրությունը։

Մականունները ժողովրդի կենցաղում շատ լայն տարածում ունեցող միավորներ են և պատահական չէ, որ XIX դարի առաջին տասնամյակներում, երբ արևելահայերի համար զանգվածաբար ազգանուններ էին ձևավորվում, պապանուններին, տոհմանուններին, հայրանուններին զուգահեռ ազգանվակերտության երկրորդ աղբյուրը և՛ իր նշանակությամբ, և՛ տեսակարար կշռով մականունն էր։ Մականվան նկատմամբ հետաքրքրությունը միայն ասվածով չէ, որ սահմանափակվում է։ Մեր օրերում ազգային առանձնահատկությունների նկատելի կորստի և զլրբալցման պայմաններում աստիճանաբար անհետանում են նաև մականուններն ու տոհմանունները։ Այս առումով բավական է համեմատել XX դարի սկզբի, կեսերի և մեր օրերի Գյումրին, որը սրամիտ, ինքնատիպ, դիպուկ մականունների շտեմարան էր։ Գյումրեցիների հումորի զգացումը հաճախ արտահայտված է հենց նրանց մականուններում։ XX դարի սկզբներում գրեթե բոլոր գյումրեցիները մականուններ են ունեցել։ Մականունով գյումրեցիներից հատկապես ճանաչված է Պոլոզ Մուկուչը (Սկրտիչ Ղազարոսի Մելքոնյան), որն իր մականունը ստացել է բարձրահասակ լինելու պատճառով։ Պոլոզի անվան հետ են կապվում շատ առակներ ու սրբախոսություններ, և այս առումով նա մեծապես նպաստել է հայ բանավոր երգիծանքի զարգացմանը։ Երբ Պոլոզին հարցնում են, թե ձեր քաղաքում ինչու՞ են այդքան եկեղեցիներ կառուցել, պատասխանում է.

«Նախ՝ օր Աստված մեզմից գոհ էղնի, և հետո՝ մարդիկ չսեսն թե, գյումրեցիք ժլատ են»։³

Մականունով ճանաչված գյումրեցիներից են եղել մաշինիստ Մստոն, որ ձեռքերը կողքին քիթ-քիթ դրած անցնում էր գնացքի տակով, մսի կոմբինատի Միսնոյ Մնացը, որ ութսունից իննսուն կիլոգրամ միս էր կապում իր վրա, Անտառավան թաղամասի Տախտը, որն ապրել է հարյուր տասնյոթ տարի և ըսան որդի է ունեցել, Փափախանի պատշար Իսկյալա Կորյունը, որ առանց իսկյալա կապելու պատը շարում էր մինչև ծածկը, Զիթ Շմոն, որի քթի երկարությունը 11 սմ էր։

XX դարի կեսերում մականուններ ունեին բոլոր ճանաչված արիեստավորները՝ Ֆանտագի Արտաշը (նորածն կոստյումներ և վերարկուներ է կարել), Դամսկի Խորենը (հագուստներ է կարել միայն կանանց համար), Շափիսջի Գևորը (զվխարկներ է կարել), Շուշունց Վաղոն (ապակի է գցել), Դրագոն Կարոն (հագուստ է կարել քաղաքի զինվորականների համար), Կաֆար Աղասը (թելեր և հագուստներ է ներկել), Սապոժնիկ Մուկուչը (քաղաքի լավագույն կոշակակարն է եղել), ֆայտոնջիները՝ Վիսյոյի Վարդանը (ուրախ բնավորություն է ունեցել), Ֆայտոն Ալեքը, Կենտ ձի լծող Վանուշը, Ֆայտոնջի Բաբիկենց Հայկը, վարորդները՝ Բեգոնեմոն Խաչոն (մեքենան միշտ անսարք վիճակում է եղել), Լիժնիկ Սուր (մեքենան արագ է վարել), Թիպի Աշոտը (բռնկում բնավորություն է ունեցել), Բռատ Զանը (շատ է օգտագործել այդ արտահայտությունը), Ուզուն Գարեգինը (բարձրահասակ լինելու համար), ռաբիսի երաժիշտները՝ Իզվեստնի Արամայիսը (ճանաչված է եղել), Նեգր Վալոդը (թխամորթության համար), Դուսքյանդ Հրաչը (շատ լավ է երգել «Դուսքյանդի դուրան» երգը) և շատ ու շատ ուրիշներ։

Այս շրջանում տարածված են եղել նաև մականվանական տոհմանունները՝ Տանձիպոչենք (սրանց տոհմին բնորոշ է եղել նիհարությունը), Չախալօղլենք (աչքերի գույնի պատճառով), Քեֆչիները (ուրախ բնավորություն են ունեցել), Եղունգ աշողենք (գուշակությամբ են զբաղվել), Մազմանենք (պարամագործներ են եղել), Չախմախովենք (տոհմահայր Հ. Չախմախյանը հրացան է պատրաստել), Չալդենք (Վարդան պապը գնացել է գետ լողանալու՝ ընկերները շորերը գողացել են), Դըրմենք (մեծ գումար են հատկացրել Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման համար), Ղայֆա-

³ Հր. Ի Կ ի լ ի Կ յ ա ն, Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ, Եր., 1989։

ջոնք (սրճարան են ունեցել, որտեղ միայն սև սուրճ են մատուցել), Չոլախովենք (ազգում ոտքից արատավոր մարդիկ են եղել):

Այսօր Գյումրիում, կարելի է ասել, չկան մականվանական տոհմանուններ, բայց տարածված են մականունները, որոնք հիմնականում կապվում են անհատի ներքին ու արտաքին հատկանիշների, զբաղմունքի հետ:

ա) Արտաքինի հետ կապվող մականուններ՝ Ճուտ Հենդո (փոքրամարմին է), Ժուտի Մուկուչ (ղեղմամորթ է), Բռակ Սուրեն (տձև մարմին ունի), Սևուկ Լյովա (թխամորթ է), Դոզուխ Արմեն (մեծ գլուխ ունի), Բոլոզ Հայկ (տարվա բոլոր եղանակներին զվարկով է ման գալիս), Բիծուկ Արտյոմ (թեև շատ երիտասարդ է, բայց մազերը սպիտակել են), Չալկա Գագո (զվխին սպիտակ մազերի փունջ կա), Գմփո Օնիկ (շատ գեր է), Սատկած Հենդո (նիհար է):

բ) Ներքինի հետ կապվող մականուններ՝ Դուռնոյ Միշա, Դուրին Սաշիկ, Դամբուկ Ավո (հիմար լինելու համար են ստացել այդ մականունները), Նավս Բարսեղ, Թարախ Երվանդ, Աֆերիստ Մարտին (իրենց էությամբ խորամանկ մարդիկ են), Բառադի Աշոտ (ոչ մեկին ոչ մի հարցով չի օգնել), Զեֆչի Աշիկ (ուրախ բնավորության համար), Կոմայլուտոր Գագո (շատ խելացի է), Հարգանք Խաչո (շատ հարգված մարդ է), Բեզդուխ Արմեն (զիջող և հարմարվող բնավորություն ունի):

գ) Զբաղմունքի հետ կապվող մականուններ՝ Ապտեկ Միշա (ղեղագործ), Կոկո Անո (իրենց թաղում կաթ վաճառող), Դռել Ռաֆ (մանուկ հասակում սիրել է պատերը փորել), Կոմ Հայկ (շուկայում բաժակով օդի վաճառող), Դավլենի Սոնա (բուժքույր թաղի բոլոր բնակիչներին առաջին բուժօգնություն ցույց տվող), Ժելե Գագո (վարսավիր):

Մեր խորին համոզմամբ՝ ժամանակն է ուսումնասիրել դրանք և իբրև ազգային արժեքներ պահպանել սերունդների համար: Ասվածից ելնելով՝ մենք ձեռնամուխ ենք լինում Գյումրու, Շիրակի մարզի և հարակից շրջանների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ վայրերի մականվանական համակարգի ուսումնասիրությանը: Այն կկատարվի անվանագիտության մեջ լայնորեն տարածված եղանակով՝ բառակազմական, իմաստային և արեալային վերլուծություններով:

Ասվածից զատ, օգտվելով Տ. Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարանի»⁴ ընձեռած փաստերից, նպատակ ունենք ուսումնասիրել նաև մականվանական հիմքերով ազգանունների ամբողջությունը: Թեմայի հետ կապվող նյութերի հավաքումն իր հիմնական մասով ավարտված է: Դրանք ընդգրկում են Գյումրին և հարակից գյուղերն ու քաղաքները՝ Ախուրյան, Ագատան, Հովիտ, Զրառատ, Վահրամաբերդ, Ամասիա, Աշոցք, Թորոս, Սեպասար, Մեծ Զեթի, Փոքր Զեթի, Փոքր Սարիար, Արթիկ, Մարալիկ, Շիրակամուտ, Մեծ Պարնի, Հայկասար, Պեմզաշեն, Շենավան, Մեծավան, Ծաղկաբեր, Արևշող, Սարչապետ: Մեր առջև դրված խնդրի լուծումը մեր կարծիքով կգա իր համեստ լուծման ներդնելու հայկական անվանագիտական համակարգի ուսումնասիրության մեջ:

ВОСПРИЯТИЕ ПСЕВДОНИМОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Резюме

С. Агабабян

Псевдоним является основным понятием такой науки о языке как ономастика. Если в восточно-армянском языке псевдоним идентичен фамилии, то в западно-армянском языке обозначает все то, что приписывается к имени, кроме фамилии.

Мы глубоко убеждены в том, что настало время изучить их и сохранить для потомков, как национальную ценность. Из сказанного следует то, что мы взяли за изучение системы псевдонимов в Гюмри, в Ширакском регионе и вне его.

⁴ Տ. Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Եր., 2000: